

ՄԵՂՐԻ ԵՎ ՄԵՂՐԱՄՈՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲԺԻՇԿՆԵՐ
 ԲՈՒՆԻՔՔ ՍԵՔԱՍՏԱՅՈՒ ԵՎ ԱՍԱՐ ՍԵՔԱՍՏԱՅՈՒ ԳԵՂԱՏՈՄՍԵՐՈՒՄ
 (XIV—XVII ԳԱՐԵՐ)

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մ. Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի ինստիտուտ—Մատենադարան, Երևան
 բաժնի XIV—XVII դարերի հայ բժշկարանների Բունիաթ Սեբաստացու զեղատուները

Հին և միջնադարյան հայ ժողովրդական բժշկության մեջ որպես ղեղա-
 միչոց կրթեման առանձին, կրթեման էլ ուրիշ նյութերի հետ, իրրև ղեղատու-
 ների բաղադրիչ մաս, օգտագործվել է նաև մարդու փոքրիկ բարեկամի՝ մեղվի
 արտադրանքը՝ մեղրն ու մեղրամոմը, հաճախ էլ մեղվաթույնն ու մեղրաչու-
 րը։ Ինչպես վկայում են գրիչներն ու ժողովրդական բժիշկները, այն միշտ էլ
 բարելավել է հիվանդի վիճակը։ «Գեոևս վազ միջնադարում Փոքր Հայքի Սե-
 բաստիա մայրաքաղաքը, — ինչպես գրում է Դոնարա Կարապետյանը, — եղել
 է հայ գրչության կենտրոններից մեկը, որտեղ գրվել և ընդօրինակվել են բա-
 զում ձեռագրեր» [1, էջ 7]։ XI դարում Սեբաստիայում Գրիգոր Ակոսեցին
 գրել է Ավետարաններ, Ասար Սեբաստացին՝ «Գիրք բժշկութեան արհեստի»,
 Բունիաթ Սեբաստացին՝ «Գիրք բժշկութեան տուժարի» և այլն։ Վերջին եր-
 կու բժշկարանները դասվում են հայ բժշկության մեծագույն արժեքների շար-
 ըր։ Բունիաթ Սեբաստացին ապրել ու ստեղծագործել է մոտավորապես 1575—
 1650 թթ., նրա ծննդյան ու մահվան ստույգ թվականները հայտնի չեն։

Բունիաթ Սեբաստացու մասին առաջին գրավոր տեղեկությունը հանդիպում
 ենք «Բագմավեպում», ուր նա հիանալի բնութագրում է բժշկին՝ Սեբաստա-
 ցին նշում է, թե ինչպիսին պետք է լինի բժիշկը՝ բարեխիղճ ու պարտա-
 ճանաչ, պետք է հասկանա հիվանդություն առաջացնող պատճառները, լինի
 խելոք, լավ իմանա բոլոր ղեղերի զորությունը, հիվանդի խսկական ցավը
 հասկանալու զեպքում միայն ղեղ նշանակի [2, էջ 215]։

Բունիաթ Սեբաստացին իր «Գիրք բժշկութեան տուժարի» բժշկարանը գրի-
 չիս ուղենիչ է ունեցել միջնադարյան հայ խոշորագույն բժշկապետեր՝ Մխի-
 ֆար Հերացու, Գրիգորիսի, Ամիրզոզվաթ Ամասիացու աշխատությունները,
 որոնց քաջածանոթ է եղել։ Իր աշխատության մեջ նա խոսում է բոլոր ախ-
 տաբանական շեղումների մասին, մանրամասն կանգ է առնում հատկապես
 ներքին հիվանդությունների՝ մահճարուժական պատկերների, հիվանդության
 էջի կանխազույսկման, աղաբխման և խնամքի հարցերին։ Խոսում է հի-
 վանդությունը առաջացնող պատճառների մասին։ Ծառ կարևոր է Բունիաթ
 Սեբաստացու այն տեսակետը, թե հիվանդի որևէ օրգանի ախտաբանական
 փոփոխությունները կարող են ազդել հարևան օրգանների վրա ևս, Ըստ Բու-
 նիաթ Սեբաստացու՝ մարմնի այրուցվածությունը, ջրզոդությունը առաջա-
 նում են, կր հիվանդանում են լյարդը, ստամոքսը, փայծաղը։ Նա նկատում

է, որ «հիվանդ լյարդի ուժը չի պատի կերակրահայտութիւնը դարձնել արյուն» [3, էջ 78 բ]: Կամ՝ նա այն ճիշտ տեսակետին է, որ գլխի և դեմքի հիվանդութիւնները պատճառով կարող է վնասվել դիմային նյարդն ու ծովի այդ նույն կողմի աչքը կամ շրթուները [3, էջ 63 բ]:

Բունիաթ Սեբաստացին իր բժշկարանի հիսուն դուռներէից 15-ը նվիրել է նյարդային համակարգի զանազան ախտահարումներին և դրանց բուժմանը: Նա հատուկ ուշադրութիւն է դարձրել հիվանդից շտապ արյուն բաց թողնելու բուժամիջոցի վրա: Նա նշում է, թէ ինչքան շուտ և շատ արյուն հեռացվել հիվանդ մարմնից, այնքան շուտ այն կառողջանա [3, էջ 69 ա]: Փորձառու բժիշկը օգտվել է հիվանդին աչքով զննելու, ձեռքով շոշափելու, ականջով լսելու մեթոդներից՝ հատուկ ուշադրութիւն դարձնելով հիվանդի մաշկի գունին, շնչառութիւնը, այտուցվածութիւնը, հիվանդի խորխի, մեզի, թարխի գոյութիւն, կզանքի գոյնի, հոտի և այլ հատկութիւններին, որոնք մինչև այժմ էլ կիրառվում են գիտական բժշկութեան մեջ:

Բազմապիսի հիվանդութիւններ բուժելիս՝ Բունիաթ Սեբաստացին իր դեղատոմսերում զանազան նյութերի հետ օգտագործել է մեղրը, մոմը, մեղրաչուրը: Բերինք նման դեղատոմսերից մի քանիսը:

«Անդամալուծութեան (մարդու մարմնի սրէ մասի, չղերի, բազկի, ոտքերի), թուլութեան և ցավերի ժամանակ նա հանձնարարում է (եթէ միաժամանակ մեքքը, վիզը նրանց կից հողերը վատ ուժ են և թույլ) ավյալ մասերին բսկ զուտի ձեթ (կապարա բույսի ձեթ), հապի մինթի (դեղախոնուրդ): Խմելու տալ ամեն օր 10 գրամ վարդի մուրաբա՝ տաք ջրով բացված, հետո՝ այնարիճ (դեղամիջոցների շիլա), ապա ողողել մեղրով, հետո տալ մազաաբև (ծառի խեժ), վերջում էլ ծամել տալ լամիլ» [1, էջ 72]: Մեկ այլ դեղատոմսում ասում է՝ «նման դեպքերում հուկնա արա, տուր մատուրի և մեղրի խոնուրդ (թրիաք), վերջում էլ՝ շէտերաճին (պղպեղիկ) հաբը», [1, էջ 72]:

Աչքերի ցավերի, վատատեսութեան դեպքում նույնպես դեղատոմսեր է նշում: Եթէ ձերութեան պատճառով աչքը լավ չի տեսնում՝ հում մեղրը և սև այծի լեղին 3 օր աչքին զննել [1, էջ 77]: Նրբ աչքը արնակալած է և ծակծկում է, առաջարկում է զննել հում մեղր [1, էջ 77]: Աչքի տեսողութեանը լավացնելու համար առաջարկում է կարգովի լեղին հում մեղրի հետ զննել աչքին [1, էջ 77]: Աչքի վատատեսութիւնը անցկացնելու համար առաջարկում է մեկ այլ դեղատոմս՝ «քարոսի (մաղադանոս) չուրը մեղրով, ծիծան լեղին մեղրով, բոշի լեղին մեղրով դիր աչքն» [1, էջ 77]:

Բունիաթ Սեբաստացին զեղ է առաջարկում նաև ականջացավի համար: Եթէ ականջացավի պատճառով այն ուռած է, ականջի ուռած մասի վրա դնել մեղրով եփած աղալնու ձերա [1, էջ 78]: Իսկ երբ ականջից արյուն է գալիս, առաջարկում է՝ «գղթորը մանր աղալ, բացախով խոննել և կաթեցնել ականջի մեջ, հետո էլ 3 անգամ կաթեցնել և աջցրած մեղրաչուր» [1, էջ 79]: Այս դեղատոմսերը բազմիցս փորձել ենք, դրանք ավել են լավ արդուներ: Սեբաստացին մեղրի համամասնութեամբ դեղատոմսեր ունի նաև թթի ցավերի, թթի միջի մսի հեռացման, փակ քիմքը բացելու համար: Այս դեպքում նա առաջարկում է՝ «առ սմպուլ, դարանֆիլ, ժ. ժ. (տաւ-տաւ) տրամ աղա և մաղն և տրորել ջրահանի գինով ու կաթեցրու թիթը, ինչպես նաև ողողել թիթը, հետո էլ մեղրով պատրույգ դիր թիթը: Մեկ ժամից հետո փռնկալ

տուր: Գրանց շնորհիվ եթէ քթում շոր խոց կա բնկնում է: Հետո էլ սպիտակ մահլամով բուժիր» [1, էջ 79]:

Լուծը բուժելու բաժնում Բունիաթ Սեբաստացին առաջարկում է՝ «եթէ լուծը արնախառն ու թարախային է պետք է աղիքները լվանալ մեղրաջրով մեկ օր և մեկ զիշեր ապա տալ այնպիսի, ֆաղարա ա(մեկ) տրամ, կամ չղախոտի ջուր» [1, էջ 91]:

Հազը բուժելու համար առաջարկում է՝ «առ կղբու ձու, սալիխայ, մշմշի կուտ, սև և սպիտակ պղպեղ, դարբի պղպեղ, դաղձ, զաֆրան, սրմպուլ, հնդի պ. գ(երեք-երեք) տրամ, ճալղի պաւայ ա(մեկ) տրամ, մուշք, գրնպատ, մուռ սաֆի և լազուարդ կես, կես տրամ, մուրա ա(մեկ) տրամ, դամէնն աղա ապա գ(վեց) տրամ մեղր, Ի(քսան) կարմիր շաքար խառնէ և մեղմն եռացն և սպակայա աման ած, աւուրն կես տրամ տաք ջրով տուր, օդտէ Աստուծով» [1, էջ 85]:

Փորացավի դեպքում առաջարկում է՝ «առ մաստաքի, դարաֆիլ, մահմուտիա, դանճաֆիլ, աարի ֆիլի, ճէվզի պաւա, բ. բ(երկու-երկու) տրամ կարմիր շաքարով տուր որ խմէ: Ապա հաց և լուղ ուտել տուր մինչև որ լուծի: Հետո 100 գ ըսպանա 300 գ մեղրով մաճուն արա և տուր ժմուն ա(մեկ) տրամ, խիսա լավ է» [1, էջ 94]:

Դեղ է առաջարկում նաև սուրացավի ժամանակ՝ «գսամիթն եփեն և ա(մեկ) գդալ մեղրով տուր» [1, էջ 107]:

Բունիաթ Սեբաստացին դեղ է առաջարկում նաև քոթեշի և ծաղիկ հիվանդության դեմ՝ «Թղի շորացած տերեւ ծեծե, մաղն 100 գրամ այս փոշուն խառնե 150 գրամ մեղր և ամեն երեկոյան 10 գրամ կեր ու քնի: Հետո էլ թղի ծառի կեղևը եփե ջրով ու խմե» [1, էջ 110—111]:

Դեղ է առաջարկում այրվածքների բուժման համար՝ «կապույտ գդառն ծեծե ու քացախով քսե, ապա ժե(տասնհինգ) տրամ սինամաքի, գ(երեք) տրամ սակամոնի, ե. ե(հինգ-հինգ) տրամ մաստաքի խունկ, ժե(տասնհինգ) տրամ նուշ, ժե(տասնհինգ) տրամ շաքար, դեղերուն շաք գ(երեք) մեղրով մաճուն արա և տուր գ(երեք) տրամ, ե. գ(հինգից վեց) անգամ օրը» [1, էջ 113]: Նույն նպատակի համար առաջարկում է մեկ այլ դեղ, որը միաժամանակ մաշկային հիվանդությունների համար է՝ «30 գ մաստաքէ, 30 գ սինամաքի, 30 գ դոշուն, 30 գ շաքար և 115 գ մեղր խառնել և օրը 10 գ ուտել»: Այնուհետև ավելացնում է՝ «երկու օրով մի գաղտնի տեղ նստի ու տես թե քնէ ինչ կենե» [1, էջ 114]: Երբ մարմնի որևէ մասը կարծրում է, կաշի է տալիս, խոց է առաջանում, թեփ է դուրս գալիս, Բունիաթ Սեբաստացին առաջարկում է՝ «սկզբից արյուն թողնել, սապոնով լվանալ, ապա ճնճղու սև ծերտը քացախով տրորել վրան քսել, հետո շան մեղով լվանալ, ապա առ թրփութ, դարբիղօն, հապնիլ ա. ա(մեկ-մեկ) տրամ, շահմի հանգալ կէս տրամ աղա և մաղն և մեղրով շաղվէ և տուր առաժոտուն» [1, էջ 115—116]:

Կոտրվածքի, տեղից դուրս բնկնելու և միտք չարգվելու դեպքում առաջարկում է՝ «նախ արյուն թողնել, տեղը գցել, եթէ դուրս է եկել, ապա մեկ գրամ աֆիոն, 3 գրամ մոմ, 6 գրամ հոտոմ ձեթ, բոլորը խառնել ու հալել, քսել ցավոտ ու վնասված տեղերին» [1, էջ 116—117]: Եթէ մարմնի որևէ մասի մաշկը սևացել, ճարճքել ու դեղին ջուր է դուրս գալիս, Բունիաթ Սեբաստացին առաջարկում է նախ ամեն առաժոտյան տաք ջրով լվանալ, քիթը կաթեցնել մանուշակի և դդմի ձեթեր «Մոմը վարդի եղով հալել, քիթրա, հաուու եղ հաժանգու միաժորե և քսե քիթն օգնե» [1, էջ 119]: Սնկային հիվանդությունը և թութքը բուժելու միջոց է՝ «կարագ կամ լուղ, վարդի լուղ, քաֆար, սպիտակ մոմ խառնել և դիր սնկան վրա, և ցավը և արյունը կկտրվի» [1, էջ 127]:

Բունիաթ Սեբաստացին ղեզ է առաջարկում նաև անքնության, վախի, անտարբերության, պիտացավի դեմ: Նման ղեպերում նա առաջարկում է հիվանդի պուխը օծել նարգիզի և սուսամի ձեթերի խառնուրդով, նույն բաղադրությունը կաթեցնել հիվանդի քիթը, ապա խմեցնել մեղրաջուր [1, էջ 62]:

Վերջ նշված գրեթե բոլոր ղեզամիջոցները կյանքում փորձել ենք և ստացել հիանալի արդյունք:

Միջնադարյան հայ բժշկության մեջ իր արժանի տեղն ունի XVI—XVII դդ. խաչմերուկներում շուրջ հարյուր տարի ապրած ականավոր բժիշկ Ասար Սեբաստացին, որը մեղրով ու մոմով ոչ միայն շատ օգտավետ ու բուժող ղեզորայք է պատրաստել, այլ ինքն անընդմեջ, որպես կանոն, մեղր է օգտագործել: Նրա ճաշացանկի մեջ իր մշտական տեղն է ունեցել մեղրը, որը նա կերել է ամեն երեկո՝ քնելուց առաջ և հենց դրանով էլ բացատրում է իր հարյուր տարի ապրելու գաղտնիքը: «Այն տունը, որի սեղանից անպակաս է մեղրը, երբեք սաք չի դնի բժիշկը», — գրում է նա:

Ասար Սեբաստացին ծնվել է 1565 թ. և ապրել հարյուր տարի, նա իր ժամանակի հայտնի բժիշկ Բարխուդարի որդին էր: Ասար Սեբաստացին գրել է «Գիրք բժշկական արհեստի մասին» ուշխատությունը, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 413 համարի տակ: Գիրքը բաղկացած է երկու մասից՝ հիվանդության պատմությունից և ղեզագիտությունից: Առաջինում ցույց է տրվում, թե բժշկապետերը ինչպես են ուսանում գիտելիքների արվեստը: Ասար Սեբաստացին սույն գիրքը գրելիս օգտվել է մինչ այդ արդեն հայտնի հայ բժիշկներ Մխիթար Հերացու, Գրիգորիսի, Ամիրղուվաթ Ամասիացու աշխատություններից և ինչպես ինքն է գրում ձեռագրի հիշատակարանում, հավարել ու իմի է բերել ամենաքննադիր ու պիտանին բժշկության վերաբերյալ. «խկ այժմ, նասաս ոգիս Ասար Սեբաստացիս կամեցայ զնտիրսն հաւաքեալ և զհամառօտսն և բացահայտել ըստ կարողության բժշկական պիտանի բաներ»:

Բերենք Ասար Սեբաստացու օգտագործած զանազան հիվանդությունների բուժման մի բանի ղեզատումներ, որոնց բաղադրամասերում կա մեղր և մոմ: Դժվարամիզության, երիկամների, որովայնի և նստասեղի ցավերի ժամանակ օգտագործել է՝ «Առ դուստ, և սասալիս և դուշու և զարիչին, և ասարօն և պիոյ պտուղ, գ. գ (երեք-երեք) դրամ, աղս և մաղէ և մեղրով մաճուն արա, որպես սասմն է և տուր ի ժժուն բ (երկու) դրամ կամ գ (երեք) դրամ» (էջ 165):

Պորան ոլորելու պատճառով առաջացած փորի ցավերի ժամանակ առաջարկում է՝ «Առ սև ձութ փակուր ի վերս, և կամ բնկզի շար խառնե ի մեղրն և ուտելու տուր և օգտէ» (էջ 168 բ): Չայնը կտրվելու ղեպում՝ «Առ բթանի 173 բ): Զախմածի և ընկածի համար առաջարկում է՝ «մոմեայ խժցո տաք ունդ աղժած և բուքնար աղնձած և կարմիր շամիչ կաթփած և բստուրս միակապէ և քիմոն և մոմ սև ձութ և զարբուն խառնէ և կապէ ի վերայ» (էջ եղով. և թէ չկենայ եղ և մեղրն խժցո տար: Եւ հաց եփէ պինով և ի վերս 177 բ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բունիաթ Սեբաստացի Գիրք բժշկութեան (Ժէ դար), աշխատասիրությունը Գ. Մ. Կարապետյանի, Երևան, 1987:
2. «Բազմավեպ» № 7, 1849:
3. Մատենադարան, ձեռ. № 10203:
4. Մատենադարան, ձեռ. № 413: